ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/65

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.02.2022թ. թիվ 26/26-1/2519-2022 գրությամբ «Քնար Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 04.02.2022թ. թիվ ՊՆ/02/549-2022 գրության հիման վրա, 14.02.2022թ. թիվ 26/26-1/2519-2022 գրությամբ նախաձեռնել է «Քնար Շին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Քնար Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Քնար Շին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Քնար Շին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/65 ընթացակարգի շրջանակներում 18.02.2022թ. ժամը 09:45-ին և 24.02.2022թ. ժամը 09:37-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.02.2022թ. թիվ ՊՆ/02/549-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Քնար Շին» ՍՊԸ-ի միջև 07.08.2021թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-21-4/9-1» պայմանագրի 2.1.7 կետի և 2.1.7.1 կետի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.02.2022թ. դրությամբ, միակողմանի մասնակի լուծել է՝ «ԳՀԱՊՁԲ-21-4/9-1» գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 03.02.2022թ. հրապարակվել է www.procurment.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում»

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/65 ընթացակարգի շրջանակներում 18.02.2022թ. ժամը 09:45-ին և 24.02.2022թ. ժամը 09:37-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/65 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/65 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Քնար Շին» ՍՊԸ-ի միջև 07.08.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-4/9-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով սահմանված Գնման ժամանակացույցի համաձայն՝ 330 հատ փայտե արկղերի (122մմ ՌՍ հրթիռի արկղ) ձեռքբերման համար մատակարարման ժամկետ է սահմանվել 2021թ. ըստ եռամսյակների՝ 3-րդ եռամսյակ 150 հատ, 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.12.2021թ. 180 հատ:

3. 27.12.2021թ. Գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ N 9 եզրակացությամբ արձանագրվել է հետևյալը. «Նշումներ անհամապատասխանության մասին՝ համաձայն 07.08.2021թ. «ԳՀԱՊՁԲ-21-4/9-1» պայմանագրի 245 հատ 122մմ ՌՍ հրթիռի արկղերի մատակարարումը չի իրականացված: Ըստ գնման ժամանակացույցի 20.12.2021թ. դրությամբ ուշացած օրերը կազմում են 65 հատի համար 57 աշխատանքային օր, իսկ 180 հատի համար 36 աշխատանքային օր:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս եմ բացասական եզրակացություն»:

4. ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության պետը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված 27.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչության պետի N 0760 առ 30.12.2021թ. գրությամբ ներկայացվել է «Քնար Շին» ՍՊԸ-ի հետ 07.08.2021թ. կնքված ԳՀԱՊՁԲ-21-4/9-1 պայմանագրի մասնակի լուծման և N 015 առ 19.01.2022թ. գրությամբ տրամադրվել է բացասական եզրակացություն:

Ելնելով վերոնշվածից, առաջարկում եմ Ձեր միջնորդությունը ՀՀ ՊՆ ԳԿ վարչությանը՝ չմատակարարված 245 հատ փայտե արկղեր (122մմ ՌՍ հրթիռի արկղ) մասով միակողմանի մասնակի լուծել «Քնար Շին» ՍՊԸ-ի հետ 07.08.2021թ. կնքված ԳՀԱՊՁԲ-21-4/9-1 պայմանագիրը, հիմք ընդունելով գնումների ոլորտը կարգավորող

իրավական նորմատիվ ակտերի պահանջներն ու պայմանագրի 2.1.7 կետը (միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի)), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը) և 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի) պահանջների կիրառումը (20.12.2021թ. դրությամբ՝ չմատակարարված 65 հատ փայտե արկղեր (122մմ ՌՍ հրթիռի արկղ) մատակարարման ժամկետը խախտվել է՝ 57 աշխատանքային օրով, իսկ 180 հատինը՝ 36 աշխատանքային օրով):...

5. Պատվիրատուն «Քնար Շին» ՍՊԸ-ին ուղղված 02.02.2022թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Քնար Շին» ՍՊԸ-ի միջև 07.08.2021թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-21-4/9-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2021թ. 3-րդ եռամսյակի ընթացքում, պետք է մատակարարեր 180 հատ փայտե արկղեր (122մմ ՌՍ հրթիռի արկղ), որից ոչ մի հատ չի մատակարարվել ընդհանրապես:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի և 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.02.2022թ.-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը: (...)»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 03.02.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.02.2022թ. թիվ 26/26-1/2519-2022 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 04.02.2022թ. թիվ ՊՆ/02/549-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ

մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Հ պաշտպանության նախարարության և «Քնար Շին» ՍՊԸ-ի միջև 07.08.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-4/9-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով,

ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ով սահմանված Գնման ժամանակացույցի համաձայն՝ 330 հատ փայտե արկղերի (122մմ ՌՍ հրթիռի արկղ) ձեռքբերման համար մատակարարման ժամկետ է սահմանվել 2021թ. ըստ եռամսյակների՝ 3-րդ եռամսյակ 150 հատ, 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.12.2021թ. 180 հատ:

27.12.2021թ. Գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ N 9 եզրակացությամբ արձանագրվել է հետևյալը. «Նշումներ անհամապատասխանության մասին՝ համաձայն 07.08.2021թ. «ԳՀԱՊՁԲ-21-4/9-1» պայմանագրի 245 հատ 122մմ ՌՍ հրթիռի արկղերի մատակարարումը չի իրականացված: Ըստ գնման ժամանակացույցի 10.12.2021թ. դրությամբ ուշացած օրերը կազմում են 65 հատի համար 57 աշխատանքային օր, իսկ 180 հատի համար 36 աշխատանքային օր:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս եմ բացասական եզրակացություն»:

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության պետը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված 27.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչության պետի N 0760 առ 30.12.2021թ. գրությամբ ներկայացվել է «Քնար Շին» ՍՊԸ-ի հետ 07.08.2021թ. կնքված ԳՀԱՊՁԲ-21-4/9-1 պայմանագրի մասնակի լուծման և N 015 առ 19.01.2022թ. գրությամբ տրամադրվել է բացասական եզրակացություն:

Ելնելով վերոնշվածից, առաջարկում եմ Ձեր միջնորդությունը ՀՀ ՊՆ ԳԿ վարչությանը՝ չմատակարարված 245 հատ փայտե արկղեր (122մմ ՌՍ հրթիռի արկղ) մասով միակողմանի մասնակի լուծել «Քնար Շին» ՍՊԸ-ի հետ 07.08.2021թ. կնքված ԳՀԱՊՁԲ-21-4/9-1 պայմանագիրը, հիմք ընդունելով գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմատիվ ակտերի պահանջներն ու պայմանագրի 2.1.7 կետը (միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի)), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը) և 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի) պահանջների կիրառումը (20.12.2021թ. դրությամբ՝ չմատակարարված 65 հատ փայտե արկղեր (122մմ ՌՍ հրթիռի արկղ) մատակարարման ժամկետը խախտվել է՝ 57 աշխատանքային օրով, իսկ 180 հատինը՝ 36 աշխատանքային օրով):...

Պատվիրատուն «Քնար Շին» ՍՊԸ-ին ուղղված 02.02.2022թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Քնար Շին» ՍՊԸ-ի միջև 07.08.2021թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-21-4/9-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2021թ. 3-րդ եռամսյակի ընթացքում, պետք է մատակարարեր 180 հատ փայտե արկղեր (122մմ ՌՍ հրթիռի արկղ), որից ոչ մի հատ չի մատակարարվել ընդհանրապես:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի և 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.02.2022թ.-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը: (...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 03.02.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***<u>30</u> օրից ավելի***:

Այսպիսով՝ վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ արձանագրում եմ, որ «Քնար Շին» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 07.08.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված

խախտում, ուստի առկա են «Քնար Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.02.2022թ. թիվ 26/26-1/2519-2022 գրությամբ «Քնար Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Քնար Շին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**